ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.08.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 79/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-79/16 բողոք), «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 09.08.2016թ. ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը և ԳԲԽ-79/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 17.08.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.07.2016թ. ներկայացրած բողոքով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն 30.10.2015թ. www.gnumner.am էլեկտրոնային կայքում հրապարակել է 2 տարի ժամկետով ֆիզիկական անվտանգության և ավտոմատիզացված ազդանշանային համակարգերի միջոցով անվտանգության ծառայության մատակարարի ընտրության ARM-T 021/15 բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից երկու տարի ժամկետով ARM-T 021/15, լոտ 1 և լոտ 2, ծածկանվամբ գնումների ընթացակարգով, «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հրավերով սահմանված մասնակցության իրավունքին և որակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանության ակտի հիման վրա, այսինքն, որակավորման փուլն անցնելուց հետո, մասնակցել է 15.01.2016թ-ին էլեկտրոնային աճուրդին և զբաղեցրել առաջին տեղը՝ ստանալով ԴԱՍ-1: Մրցույթի հանձնաժողովի 25.02.2016թ. պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող, որի հետ պետք է կնքվեր պայմանագիր, սակայն պատվիրատուի կողմից պայմանագիրը սահմանված ժամկետում չի կնքվել: Պատվիրատուի պահանջով, Ընկերությունը ARM-T 021/15 ծածկանվամբ, լոտ 2-ի ցանկով ներկայացված պահպանման ենթակա օբյեկտներում /համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված նախնական պայմանագրի, որի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանված էր 01.04.2016թ-ը/ 01.04.2016թ.-ից հանձնման-ընդունման ակտով ընդունում և իրականացնում է պահնորդական ծառայություն:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ-ն, 06.04.2016թ-ին Ընկերության վերաբերյալ ձեռք է բերել հարկային գաղտնիք կազմող տեղեկատվություն և այն, իր շահերից ելնելով, ներկայացրել է պատվիրատուին, որպեսզի Ընկերությունը որակազրկվի և պատվիրատուն այդ տեղեկատվությունն օգտագործելով, ներկայացրել է «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս հայտը ներկայացնելու պահի՝ 30.11.2015թ-ի դրությամբ, գրանցված 100 որակավորված պահնորդի վերաբերյալ հարկային հաշվետվություն ներկայացնի պատվիրատուին:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 20.04.2016թ. պատվիրատուի հետ քննարկել է այդ ոչ օրինաչափ պահանջը և ներկայացրել, որ 100 որակավորված պահնորդ՝ գրանցված վերջին հարկային հաշվետվությունում պահանջը պատվիրատուն ներկայացրել է մրցույթի հայտին կից «պահպանության ռեժիմի նկարագիր» բաժնի մեջ, որն անհրաժեշտ է պայմանագրի կատարման, այսինքն, ծառայությունների մատուցման պահին և այն արտացոլված է պայմանագրում, որպես կատարման պայման, ինչն, ըստ էության որակավորման պահանջ չէ, իսկ եթե դրա անհրաժեշտությունը առկա է, ապա այն կարող է ներկայացվել պայմանագրի կատարման պահի՝ 01.04.2016թ-ի դրությամբ:

Սույն թվականի մայիսի 10-ին պատվիրատուի կողմից ուղարկվում է էլեկտրոնային փոստով գրություն, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն մրցույթի հանձնաժողովի 04.05.2016թ. որոշմամբ որակազրկվել է, սակայն Ընկերության պահանջով որոշման պատճենը պատշաճ

չի ծանուցվել, և տվյալ որոշումը www.gnumner.am էլեկտրոնային կայքում չի հրապարակվել, ինչի արդյունքում «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն զրկվել է իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից:

Վերը նշված խախտումների, հակամրցակցային համաձայնության և ՀՀՈՊՊԳՎ-ի կողմից գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 16.05.2016թ. դիմում է ներկայացրել ՀՀ ՏՄՊՊ հանձնաժողովին, որտեղ հարուցվել է վարչական վարույթ:

Մինչև ՀՀ ՏՄՊՊ հանձնաժողովի կողմից որոշում կայացնելը, սույն թվականի հուլիսի 08-ից Ընկերության կողմից փաստացի մատուցվող ծառայությունները պատվիրատուի պահանջով դադարեցվել են, քանի որ պատվիրատուն 23.06.2016թ. կնքել է պայմանագիր երկրորդ տեղը զբաղեցրած ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության հետ՝ առանց պայմանագրի կնքման մասին ծանուցումը հրապարակելու: «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն պայմանագրի կնքման մասին տեղեկացել է ՀՀՈՊՊԳՎ-ի կողմից ուղարկված գրությունից:

Ընկերությունը գտնում է, որ պատվիրատուն, գնման գործընթացը նախապատրաստելիս, գնման ընթացակարգի հրավերը և բնութագիրը կազմել է իր հայեցողությամբ, չի ապահովել մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ և հանգեցրել է մրցակցության սահմանափակմանը: Մասնավորապես, ոչ պակաս, քան 100 պրոֆեսիոնալ պահնորդների առկայության պահանջը (պահնորդի պրոֆեսիոնալ որակավորում ստացած), որն արտացոլված է հարկային մարմիններին ներկայացված Ընկերության վերջին հաշվետվության մեջ, պատվիրատուն ներկայացրել է մրցույթի հրավերին կից «պահպանության ռեժիմի նկարագիր» բաժնի մեջ, սակայն նշված չէ, թե վերջին հարկային հաշվետվությունը որ ժամանակահատվածին է վերաբերվում՝ հայտը ներկայացնելու օրվա, թե՞ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահի դրությամբ, ինչի արդյունքում Ընկերության պնդմամբ, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պահանջը՝ խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Պատվիրատուի պնդմամբ՝ 100 պրոֆեսիոնալ պահնորդների պահանջը, որն արտացոլված է հարկային մարմիններին ներկայացված Ընկերության վերջին հաշվետվության մեջ, վերաբերվել է հայտ ներկայացնելու օրվան, այլ ոչ թե պայմանագիր

կնքելու օրվան: Ընկերության պնդմամբ, նշված 100 աշխատող ունենալու պայմանը կարող էր վերաբերվել միայն պայմանագիր կնքելու օրվան, հետևյալ հիմնավորմամբ. պատվիրատուի 52 օբյեկտների պահպանության համար «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն աշխատանքային պայմանագիր է կնքել թվով 180 ՀՀ քաղաքացիների հետ, որոնք իրենց աշխատանքային պարտականությունները կատարել են «պահպանության ռեժիմի նկարագիր» բաժնի մեջ սահմանված օբյեկտներում: Եթե 100 աշխատակից ունենալու պայմանը վերաբերվել է մրցույթի ընթացքում հայտ ներկայացնելուն, ապա Ընկերությունը հաղթելու դեպքում նշված 100 աշխատակիցներով ինչպե՞ս էր ապահովելու օբյեկտների պահպանությունը, եթե նշված ծառայության համար անհրաժեշտ է կրկնակի թվով պահնորդներ:

Ընկերությունը հայտնել է, որ նշված 100 աշխատակից ունենալու պայմանը նախատեսված է եղել պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագրի նախագծի 7-րդ կետում, այսինքն, պատվիրատուն անկախ այն հանգամանքից, որ պնդում է, որ դա վերաբերվում է հայտ ներկայացնելու օրվա դրությանը, այնուամենայնիվ փաստաթղթով հիմնավորում է, որ դա պայմանագրային պայման է: Բացի այդ, եթե 100 աշխատակից ունենալու պայմանը վերաբերվել է հայտ ներկայացնելու օրվա դրությանը, ապա այդ 100 աշխատակիցների մեջ ներառված են նաև այլ հաստիքներ, որոնք պահնորդ լինելու հետ կապ չունեն: Ընկերությունը գտնում է, որ այսպիսով պատվիրատուն արհեստական խոչընդոտներ է ստեղծել մասնակիցների համար:

Ընկերությունը գտնում է, որ պատվիրատուի կողմից պայմանագիր չկնքելու պատճառը, ինչպես նաև վերը նշված փաստերը խոսում են այն մասին, որ պատվիրատուի պատճառաբանությունները և «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի որակազրկումը, խտրական են և դիտավորյալ ստեղծել են անհավասար ու անբարեխիղճ միջավայր՝ սահմանափակելով հնարավոր մասնակիցների՝ մրցույթին մասնակցելու իրավունքը:

Ընկերությունը մատնանշել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի թիվ 61Ա որոշումը՝ «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու և այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու մասին»: Նշված որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետը սահմանում է, որ գնումներ կատարելիս՝ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ հնարավորինս մեծ թվով մասնակիցներ ներգրավելու համար՝

բացառելով որակավորման այնպիսի չափանիշների ու բնութագրերի, գնումների այնպիսի տեսականու, քանակների ու պատվերների կատարման այնպիսի ժամկետների, վճարման այնպիսի պայմանների սահմանումը, որոնք կրում են խտրական բնույթ, ստեղծում են հակամրցակցային միջավայր կամ սահմանափակում են մրցակցությունը՝ առանց համապատասխան հիմքերի առկայության խոչընդոտելով կամ սահմանափակելով որևէ անձի՝ գնումներին մասնակցելու իրավունքը: Այդ նպատակով՝

1) հաշվի են առնվում բոլոր հանգամանքները, հատկապես, պայմանագրի բարդությունը, երբ սահմանվում են մրցակցային գործընթացների իրականացման ժամկետները.

2) գնման առարկայի բնութագրերը՝

ա. մրցակցության հավասար պայմաններ են ապահովում հնարավոր մասնակիցների համար.

բ. բացառում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը.

գ. օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

դ. ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Այսպիսով, պատվիրատուն չի հիմնավորել թե ինչու՞ պետք է հայտ ներկայացնելու օրվա դրությամբ մասնակիցը ունենար 100 որակավորված պահնորդ, գրանցված վերջին հարկային հաշվետվությունում: Ստացվում է, որ այդ պահանջը որևէ էական նշանակություն չունի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու համար, քանի որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտ ներակայացնելու դրությամբ չի ունեցել այդքան աշխատակից, մինչդեռ կարողացել է երկու անգամ ավել աշխատակիցներով իրականացնել պատվիրատուի օբյեկտների պահպանությունը:

Ընկերությունը գտնում է, որ պատվիրատուն խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները՝ ARM-T 021/15 մրցույթով սահմանափակել է մասնակիցների հավասար իրավունքով մասնակցությունը, և ՀՀՈՊՊԳՎ-ի համար սահմանել է նպաստավոր պայմաններ և արտոնություններ: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը մասնակցել է

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի ARM-T 021/15 մրցույթին և զբաղեցրել է երկրորդ տեղը: Ընկերության պնդմամբ, վերջինս Ընկերության վերաբերյալ ձեռք է բերել հարկային գաղտնիք կազմող տեղեկատվություն և իր շահերից ելնելով, օգտագործել է այն, ցանկանալով որպեսզի Ընկերությունը որակազրկվի և իր հետ կնքվի համապատասխան պայմանագիրը, որն էլ 23.06.2016թ. կնքվել է:

Ընկերության կողմից բողոքով բարձրացվել են հետևյալ հարցերը.

1. ՀՀՈՊՊԳՎ-ն ի՞նչ կազմակերպաիրավական ձևով է մասնակցել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ARM-T 021/15 մրցույթին, եթե վերջինս տնտեսվարող սուբյեկտ չէ, այլ շահույթ չհետապնդող կազմակերպություն: Ինչ հիմքով է ՀՀՈՊՊԳՎ-ն մասնակցել մրցույթին, կամ վերջինիս գնային առաջարկը՝ պահակակետի դիմաց մեկ ժամը 412.2 դրամը /ամսական 17205955.2 դրամ առանց ԱԱՀ-ի/, ինչ հաշվարկով է ներկայացվել, և արդյոք առաջարկված գնի մեջ ներառված են օրենսդրությամբ սահմանված հարկերը և շահույթը:

2. ՀՀՈՊՊԳՎ-ն, ըստ պատվիրատուի պահանջի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցե՞լ է 100 պրոֆեսիոնալ պահնորդներ (պահնորդի պրոֆեսիոնալ որակավորում ստացած)՝ արտացոլված հարկային մարմիններին ներկայացված կազմակերպության վերջին հաշվետվության մեջ:

3. ՀՀՈՊՊԳՎ-ն հարկատու չէ և չի կարող հարկային մարմիններից ներկայացնել հաշվետվություն:

4. ՀՀՈՊՊԳՎ-ն մրցույթի պահանջով ունեցել է մասնավոր պահնորդական գործունեության լիցենզիա:

Ընկերությունը՝ վերը թվարկված փաստերի և իրավակարգավորումների համադրումից հանգել է նրան, որ պատվիրատուն՝

1. խախտել է գնումներին մասնակցելու հավասարությունը կամ մասնակիցների հավասար իրավունքով մասնակցությունը,
2. հանգեցրել է մրցակցության սահմանափակմանը,
3. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ–ին զրկել է հանձնաժողովի որոշման դեմ իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, ինչը ազդել է պայմանագիր կնքելու հնարավորությունների վրա,
4. խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը,
5. առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու, ՀՀՈՊՊԳՎ-ի հետ կնքել է պայմանագիր, ինչը զրկել է

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ–ին՝ նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ–ն գտնում է, որ պատվիրատուի կողմից նշված խախտումները ազդել են ARM-T 021/15 մրցույթում լոտ 2-ում հաղթող ճանաչված «Տրանս-Սֆեր» ՍՊԸ–ի հետ պայմանագիր կնքելու հնարավորությունների վրա, ուստի Ընկերությունը խնդրել է՝

1. չեղյալ հայտարարել պատվիրատուի և ՀՀՈՊՊԳՎ-ի միջև 23.06.2016թ-ին կնքված պայմանագիրը,

2. հայտարարել պատվիրատուի գնումների ընթացակարգը ապօրինի,

3. կայացնելու որոշում ՀՀՈՊՊԳՎ-ին պահնորդական ծառայությունների ձեռք բերման գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ–ն ի լրումն 29.07.2016թ. ներկայացված բողոքի 16.08.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պատվիրատուն 04.08.2016թ-ի ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-79/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ պնդում էր, որ նշված մրցույթի "Բաց տենդերի մասնակցի հրահանգ"-ով մատակարարին և տրամադրվող ծառայություններին ներկայացվող պահանջների համար հստակ սահմանվել է, որ մատակարարը պետք է ոչ պակաս, քան 100 պրոֆեսիոնալ պահնորդների առկայություն (պահնորդի պրոֆեսիոնալ որակավորում ստացած), որն արտացոլված է հարկային մարմիններին ներկայացված ընկերության վերջին հաշվետվության մեջ և այն ունենալու պայմանը եղել է հայտ ներկայացնելու օրը: Սակայն պատվիրատուն չի վկայակոչել «Բաց տենդերի մասնակցի հրահանգի»-ի որ կետով է սահմանվել տվյալ պահանջը:

Համաձայն «Տենդերի անցկացման կարգ»-ի մեջ ամրագրված պահանջների՝ մասնակցի կողմից ներկայացված առաջարկը պետք է ներառեր 5 կետից բաղկացած փաստաթղթերի փաթեթներ, որոնք փոփոխման ենթակա չեն՝

Որակավորման պահանջներին Մասնակցի առաջարկի համապատասխանության մասին հայտարարագիր ձև (ձևը ներկայացված է Հավելված 4-ում և փոփոխման ենթակա չէ): «Որակավորման պահանջներին Համապատասխանության մասին հայտարարագիր»-ի ձևի մեջ «Համապատասխանության մասին հայտարարագիր» սյունակի նշանակությունը, պետք է լրացվեր հետևյալ տարբերակներով՝

1. Լիովին համապատասխանում է

2. Մասամբ է համապատասխանում

3. Լիովին չի համապատասխանում.

«Տենդերի անցկացման կարգ»-ի 2.1.1-ի կետի վերջում լրացված է հետևյալը՝ «Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում չդիտարկել մասնակցի առաջարկը, եթե ներկայացված փաստաթղթերի կազմը կամ դրանց ձևաչափը չի համապատասխանում ՏՄՀ 2.1.1 բաժնում թվարկված պահանջներին»:

Ընկերությունը գտնում է, որ պատվիրատուի կողմից, նման ձևաչափերով ներկայացված «Տենդերի անցկացման կարգը»-ի պահանջները, հնարավորություն են տալիս պատվիրատուին, մրցույթի ցանկացած մասնակցին՝ առաջարկով համաձայնությունը տալուց հետո, ներկայացնել անհամապատասխանություն կամ որակազրկում:

Պատվիրատուն պնդում էր, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ–ն որակազրկվել է, քանի որ «Որակավորման պահանջներին Համապատասխանության մասին հայտարարագիր»-ում նշել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 100 պրոֆեսիոնալ պահնորդների առկայության (պահնորդի պրոֆեսիոնալ որակավորում ստացած), որն արտացոլված է հարկային մարմիններին ներկայացված ընկերության վերջին հաշվետվության մեջ:

Ընկերության պնդմամբ պատվիրատուի կողմից ներկայացվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Հավելված 4-ի պահանջով՝ «Որակավորման պահանջներին Համապատասխանության մասին հայտարարագիր»-ի «Բլոկ գործոններ» ցանկի մեջ, պատվիրատուի կողմից լրացված՝ ***Մասնակիցը պետք է ունենա որակավորված վարչական անձնակազմ, որը բավարարում է կարգավորողի պահանջներին*** դրույթը, ինչին մասնակիցը տալիս է իր համաձայնությունը: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից նշված է «առնվազն 100 մարդ» արտահայտությանը, ապա պատվիրատուի կոնտակտային անձի՝ Լևոն Դեմիրչյանի հետ քննարկման արդյունքում պարզվել է, որ դա նորմայի մեջ է:

Ընկերությունը հայտնել է, որ «Որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարագիր»-ը ոչ թե պահանջ էր, այլ մասնակցի առաջարկ, և ստացվում է, որ «Բլոկ գործոններ» ցանկի մեջ ներառված պատվիրատուի պահանջները, մասնակիցները ներկայացրել են որպես առաջարկ՝ տալով իրենց համաձայնությունը, ինչպես օրինակ այն, որ մասնակիցը համաձայն է պայմանագիր կնքել

Հավելված 3.2-ի ձևով առանց որևէ փոփոխության կամ տենդերի հաղթողին պաշտոնապես հայտարարելուց հետո ոչ ուշ, քան 10 օրյա ժամկետում պայմանագրային պարտավորությունների կատարման համար օբյեկտներում պահնորդների ներկայությունն ապահովելու համաձայնություն:

Արդյունքում «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 01.04.2016թ. պատվիրատուի օբյեկտների պահպանության համար աշխատանքի է ընդունել թվով 180 պահնորդի:

Ընկերությունը հայտնել է, որ հայտարարագրի վերջում նշված է «Եթե մասնակցի առաջարկը չի համապատասխանում պահանջներից գոնե մեկին, պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում չդիտարկել այդ տենդերային առաջարկը», բացի վերը նշվածներից:

Ընկերության մոտ հարց է առաջանում, եթե պատվիրատուն վկայակոչում էր, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն «Որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարագիր»-ով հավաստիացրել է, որ ունի 100 որակավորված պահնորդներ, ապա արդյո՞ք հայտարարագիրը մյուս մասնակիցների կողմից ևս լրացվել է նման ձևաչափով:

Ընկերությունը պնդում է, որ պատվիրատուի այդ վարքագիծը ապօրինություն է, քանի որ մրցույթի որակավորման նման պահանջ չի առաջադրվել, իսկ պատվիրատուի կոնտակտային անձի՝ Լևոն Դեմիրչյանի հետ բազմիցս քննարկվել է հայտերի լրացման պայմանները: Հետևաբար, պատվիրատուի կողմից մրցույթի հայտերի լրացման պահանջները ներկայացվում և մեկնաբանվում են իր տեսանկյունով և ցանկությամբ՝ սահմանափակելով հավասար մրցակցության ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջը:

Վերոնշյալ փաստարկները վերաբերվում էին առաջին փուլին, իսկ նույն «Որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարագիր»-ով առաջարկը վերաբերվում էր երկու լոտերին:

Պատվիրատուի հրավերի 2.2 կետի համաձայն՝ երկրորդ փուլում ստացված առաջարկները կգնահատվեն՝ ըստ հետևյալ որակավորման պահանջներին համապատասխանության՝

Առաջարկը պետք է համապատասխանի ՏՄՀ 2.1.1-2.1.4 բաժինների բոլոր պահանջներին:
Մասնավոր պահնորդական գործունեություն կատարելու լիցենզիայի առկայություն, ինչպես նաև տվյալ ոլորտում 3 տարվա աշխատանքային փորձ (բացառությամբ այն դեպքերի, երբ Մասնակիցը ՀՀ կառավարության կողմից է լիազորված կատարել պահնորդական

գործունեություն):	
Լոտ 1 – ՊՏՄ, ԱԱԽ և ֆիզիկական պահպանություն	**Լոտ 2 – ֆիզիկական պահպանություն**
Մասնակիցը համաձայն է պայմանագիր կնքել Հավելված 3.1-ի ձևով առանց որևէ փոփոխության:	Մասնակիցը համաձայն է պայմանագիր կնքել Հավելված 3.2-ի ձևով առանց որևէ փոփոխության:
Պատվիրատուի օբյեկտների պաշտպանություն ՏԱ լիովին համապատասխան (Հավելված 1)	**Պատվիրատուի օբյեկտների պաշտպանություն ՏԱ լիովին համապատասխան (Հավելված 1)**
Մասնակիցը տրամադրում, նախագծում և տեղադրում է ՊՏՄ համալիրը ամբողջովին իր հաշվին:	Տենդերի հաղթողին պաշտոնապես հայտարարելուց հետո ոչ ուշ, քան 10 օրյա ժամկետում պայմանագրային պարտավորությունների կատարման համար օբյեկտներում պահնորդների ներկայությունն ապահովելու համաձայնություն:
Բոլոր համակարգերի գործարկումը պետք է իրականացվի պայմանագրի ստորագրումից հետո 1 ամսից ոչ ուշ:	Ֆիզիկական պահպանության պահակակետի ժամային ժամանակացույցի հետ համաձայնություն:
Մասնակիցը ծառայություններ չի մատուցում Պատվիրատուի անմիջական մրցակիցներին:	
Պայմանագրի գործողության ժամանակահատվածում մրցակիցների տենդերներին չմասնակցելու և նրանց հետ պայմանագրեր չկնքելու համաձայնություն:	
Մասնակիցը չունի պետական բյուջեի և/կամ այլ պատվիրատուների առջև ժամկետանց պարտք, որը գերազանցում է ակտիվների 50%-ը, նրա նկատմամբ չեն տարվում դատավարություններ՝ կապված նրա անվճարունակության և սնանկության հետ:	
Մասնակիցը չունի ժամկետանց պարտքեր երրորդ անձանց առջև:	
Չկան Մասնակցի ղեկավար աշխատակիցների կողմից տնտեսական հանցագործությունների կատարման համար չմարված դատվածության փաստեր:	

Չկան Մասնակցի և Պատվիրատուի միջև գնման գործընթացին նախորդող երեք տարվա ընթացքում ապրանքների/ծառայությունների մատակարարման պայմանագրերից բխող վեճերի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած այնպիսի դատական կամ արբիտրաժային որոշումներ կամ վճիռներ, որոնք վկայում են Մասնակցի կողմից օրենքի, պայմանագրով ստանձնած պարտավորությունների և գործարար շրջանառության սովորույթների կոպիտ խախտման մասին:

Վերջում լրացված է. «Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում թույլ չտալ մասնակցել Տենդերի փուլերին այն Մասնակցին, որի առաջարկը չի համապատասխանում ՏՄՀ 2.2 բաժնում թվարկված որակավորման պահանջներից գոնե մեկին»:

Այստեղից հարց է առաջանում. սա առաջարկ է, թե՞ որակավորման պահանջ:

Հրավերի 2.2 կետում նշված է՝ պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում անցկացնել մասնակցի նյութատեխնիկական բազայի տեխնիկական աուդիտ՝ որակավորման պահանջներին նրա համապատասխանության որոշման նպատակով: Աուդիտի արդյունքներով կկնքվի երկկողմանի ակտ:

Ընկերությունը հայտնել է, որ մրցույթի հանձնաժողովը՝ որակավորման պահանջներին համապատասխանության որոշման նպատակով, ստուգում է անցկացրել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի գրասենյակում և կազմվել է երկկողմանի ակտ, որից հետո Ընկերությանը տրվել է թերությունները վերացնելու համար երկօրյա ժամկետ, ինչից հետո վերջինիս թույլ կտրվեր մասնակցել էլեկտրոնային աճուրդին: «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 24.12.2015թ. թերությունները վերացրել է և պատվիրատուն Ընկերությանը իր՝ 12.01.2016թ. գրությամբ թույլատրել է մասնակցելու էլեկտրոնային աճուրդին:

Ընկերությունը գտնում է, որ որակավորման պահանջներին համապատասխանության որոշման նպատակով ստուգում կատարելուց հետո, այլ որակավորման պահանջ չէր կարող սահմանվել:

Ընկերությունը նշել է, որ պատվիրատուն նիստի ժամանակ պնդում և հայտարարում էր, որ բաց մրցույթը կազմակերպվել է ՀՀ օրենսդրության և պատվիրատուի ներքին ընթացակարգի խիստ պահպանմամբ՝ ապահովելով բարեխիղճ, ազատ և արդար մրցակցություն բոլոր մասնակիցների միջև, ինչի արդյունքում հաղթող է ճանաչվել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

Ընկերության կարծիքով ներկայացվածը չի համապատասխանում իրականությանը, իսկ գնումների ընթացակարգի ապօրինի լինելու հետևանքով խախտվել են «Գնումների

մասին» ՀՀ օրեքի 3-րդ հոդվածի սկզբունքները, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և մի շարք այլ օրենսդրական դրույթներ հետևյալ հիմնավորմամբ.

Գնման ընթացակարգին հրահանգով պահանջվել է.

1. 2.1.1 կետի՝ մասնակցի առաջարկի կազմին ներկայացվող պահանջների 5-րդ ենթակետով «Մասնավոր պահնորդական գործունեություն կատարելու լիցենզիա» (բացառությամբ այն դեպքերի, երբ Մասնակիցը ՀՀ կառավարության կողմից է լիազորված կատարել պահնորդական գործունեություն), ինչը հետևանքով խախտվել է Հրահանգի 2.1.3 կետի 5-րդ ենթակետի պահանջը:

2. 2.2 կետում՝ «Մասնակիցը ծառայություններ չի մատուցում Պատվիրատուի անմիջական մրցակիցներին»: «Պայմանագրի գործողության ժամանակահատվածում մրցակիցների տենդերներին չմասնակցելու և նրանց հետ պայմանագրեր չկնքելու համաձայնություն»: Ընկերության պնդմամբ սույն պահանջը սահմանափակել է մասնակցի բիզնեսի կամ գործունեության ընդլայնման հնարավորությունը և արդյո՞ք նույն պայմանը կիրառվել է ՀՀ Ոստիկանության ՊՊԳ վարչության հանդեպ:

3. Հավելված 3.2-ում, պայմանագրին կցված Հավելված 2-ում՝ պատվիրատուի օբյեկտների պահպանության հրահանգում հստակ նշված է ՄՊԿ /Մասնավոր պահնորդական կազմակերպություն/ և 1.2 կետով սահմանված է «Հրահանգի իրավական հիմք են հանդիսանում՝ ՀՀ Սահմանադրությունը, "Մասնավոր պահնորդական գործունեության մասին" ՀՀ օրենքը, ՄՊԿ կանոնադրությունը, «ԱրմենՏել» ՓԲԸ և ..... ընկերության միջև պահնորդական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր»:

Եթե պայմանագիրը փոփոխման ենթակա չէ, ապա ՀՀ Ոստիկանության ՊՊԳ վարչությունը մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու իրավունք չունի, ուստի վերջինիս հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագիրը ենթակա է փոփոխման, ինչը Ընկերության կարծիքով խախտում է Հրահանգի պահանջը:

4. Հրահանգի 2.4 կետի համաձայն՝ «Պատվիրատուի հաճախորդներ համարվող մասնակիցները, ինչպես նաև այն մասնակիցները, որոնք համաձայն են դառնալ Պատվիրատուի բաժանորդներ, այլ հավասար պայմանների դեպքում, առավելություն կունենան»: Այս պայմանը հանգեցնում է գերիշխող դիրքը չարաշահման:

5. Հրահանգի 4-րդ կետի համաձայն՝ «Մասնակցի որակազրկումը կրում է միակողմանի բնույթ»: Ընկերության պնդմամբ հրահանգում նշված չէ ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը, ինչով սահմանափակվել է

Ընկերության կողմից տվյալ որոշման դեմ իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունը:

2. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.08.2016թ. ներկայացված թիվ ԻՏ/1268 գրությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից ՀՀ տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով: Նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին, իսկ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած լրացուցիչ պահանջներին, որոնց կատարման նկատմամբ վերջինս իր սահմանած կարգով իրականացնում է դիտարկումներ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 26.03.2014թ. թիվ 61Ա որոշմամբ սահմանվել են լրացուցիչ պահանջներ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ: Նշված որոշման 2-րդ կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունները գնումները կազմակերպում և իրականացնում են՝ համաձայն իրենց կողմից հաստատված գնումների կարգերի՝ ինքնուրույն, առանց կողմնակի կազմակերպությունների ներգրավման: Հանրային կազմակերպությունները նաև պարտավոր են իրենց կողմից հաստատված գնումների կարգերը և բոլոր փոփոխությունները ներկայացնել հանձնաժողով: Վերոնշյալ հոդվածները վերլուծելով՝ պարզ է, որ հանրային կազմակերպությունները իրենց կողմից կազմակերպված գնման

ընթացակարգը կազմակերպում են ինքնուրույն՝ հանրային ծառայությունները կարգավորող հանձաժողովի վերահսկողության ներքո:

Տվյալ դեպքում Պատվիրատուի մրցութային հանձնաժողովը, ղեկավարվելով իր ընթացակարգով, ARM-T 021/15 բաց մրցույթի ընթացքում 25.02.2016թ. կայացրել է որոշում, համաձայն որի՝ «լոտ 2 - ֆիզիկական պահպանության պահնորդների միջոցով» բաց մրցույթի հաղթող է ճանաչվել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն: Նշված ընկերությանը հաղթող ճանաչելու մասին որոշումը հրապարակվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պատվիրատուն, վերոնշյալ բաց մրցույթի լոտ 2-ով Ընկերությանը հաղթող ճանաչելուց հետո, սկսել է պայմանագրի կնքման գործընթացը «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հետ:

Սակայն, Պատվիրատուին 07.04.2016թ. հայտնի է դարձել, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ի սկզբանե ներկայացրել է ոչ հավաստի տվյաներ, մասնավորապես՝ վերջինիս կողմից բաց մրցույթի մասնակցության պահանջը՝ կապված առնվազն 100 համապատասխան աշխատակիցներ ունենալու մասով չի համապատասխանել իրական պատկերին: Նշված հարցի կապակցությամբ Պատվիրատուն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին 07.04.2016թ. էլեկտրոնային նամակագրությամբ հարցում է ուղղել, նաև նշելով, որ մինչև 19.04.2016թ. վերջինիս կողմից ՀՀ հարկային մարմիններին ուղղված համապատասխան հաշվետվություն չներկայացնելու դեպքում՝ Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում կիրառել «Բաց տենդերների մասնակցի հրահանգի» 4.1 կետում սահմանված մասնակցի որակազրկման հիմքերը: Նշված ժամկետում «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստերը հաստատող որևէ փաստաթուղթ կամ հաշվետվություն չի ներկայացվել, ուստի Պատվիրատուն, ի դեմս մրցութային հանձնաժողովի, հիմք ընդունելով «Բաց տենդերների մասնակցի հրահանգի» 4.1 կետը՝ կայացրել է «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին որակազրկելու մասին որոշում և սկսել է նաև պահեստային մատակարար ճանաչված ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության հետ պայմանագրային հարաբերությունների կարգավորման գործընթացը: Բաց ARM-T 021/15 մրցույթի մասնակցի հրահանգով կարգավորված է նաև պահեստային մատակարարի հետ պայմանագրի կնքման գործընթացը, մասնավորապես նշված հրահանգի 1-ին կետի համաձայն՝ տենդերի անցկացման արդյունքում պատվիրատուն ամեն լոտով ընտրում է մեկ հաղթող և մեկ պահուստային մատակարար: Նույն հրահանգի 2.4 կետի համաձայն՝ պահուստային մատակարար ընտրվում է այն մասնակիցը, որի վերջնական առաջարկին կշնորհվի Դաս 2,

և պահուստային մատակարարը կարող է ներգրավել հաղթողի որակազրկման դեպքում: Այսինքն, տվյալ դեպքում, անդրադառնալով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 45-րդ հոդվածներին, ակնհայտ է, որ բողոքը կարող է ներկայացվել նախքան պայմանագրի կնքումը: Նշված պարագայում խոսքը գնում է հաղթողի վերաբերյալ որոշման հրապարակմանը, որը Պատվիրատուի կողմից իրականացվել է և որով հաղթող է ճանաչվել հենց բողոքաբեր ընկերությունը, սակայն, պայմանագիրը կնքվել է պահուստային մատակարարի հետ: Պատվիրատուն նաև նշել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում պահուստային մատակարարի հաղթող ճանաչելու որոշումների հրապարակումների հարցը, ոստի նշված դեպքերը կարգավորվում են կոնկրետ հանրային կազմակերպությունների ներքին կանոնակարգերով և հրանգներով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայամանգիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Պայմանագրի կնքման իրավասությունը «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համար առաջացել է հաղթող ճանաչելու մասին որոշման հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը, ուստի Պատվիրատուի պնդմամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից բերված բողոքը անհիմն է, քանի որ՝

1. Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, բողոքը պետք է ներկայացված լինի անգործության ժամանակահատվածում:
2. Բողոքը պետք է ներկայացված լինի մինչև պայմանագրի կնքումը:
3. Բողոքաբերը պետք է բողոքարկի պայմանագիր կնքելու մասին որոշումը, սակայն տվյալ պարագայում պայմանագրի կնքման որոշումը վերաբերվել է հենց բողոքաբերին, քանի որ հաղթող է ճանաչվել հենց վերջինս, իսկ պահուստային մատակարարի հետագա գործողությունները կարգավորվում են Ընկերության կողմից հաստատված և ընդունված ընթացակարգերով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ բողոքաբերը իր բողոքը ներկայացրել է ժամկետների խախտմամբ և միայն այն ժամանակ, երբ ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձաժողովը դադարեցրել է վարչական վարույթը, սակայն, «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն քաջատեղյակ է եղել ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության հետ կնքվող պայմանագրի գործընթացին դեռևս Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ

ԵԱՔԴ/1713/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում սույն թվականի մայիսին տեղի ունեցած դատական նիստում:

Պատվիրատուն նշել է, որ բողոքաբերի կողմից ՀՀ ՈՊՊԳՎ-ի կողմից մրցույթին մասնակցելու իրավասությանը վերաբերող նույն հիմքերով բողոք է ներկայացվել նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը իր կողմից հարուցված վարչական վարույթի քննության ընթացքում արձանագրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահնորդական ծառայությունների ձեռքբերման ոլորտը մրցակցային է, քանի որ այդ ոլորտում առկա են բազմաթիվ ընկերություններ, որոնք ձեռք են բերում պահնորդական ծառայություններ, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պահնորդական ոլորտում չի զբաղեցնում գերիշխող դիրք, հետևաբար վերջինիս վարքագիծը չի կարող համարվել գերիշխող դիրքի չարաշահում: Ինչ վերաբերում է ՀՀ ՈՊՊԳՎ-ին, ապա վերջինս, օրենսդրության իմաստով չի հանդիսանում տնտեսվարող սուբյեկտ, ուստի չի կարող համարվել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից մատնանշված իրավախախտումների սուբյեկտ, ուստի ՀՀՈՊՊԳ-ի գրոծողություններում օրենքի խախտման փաստ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը չի հայտնաբերել: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը իր 25.07.2016թ. թիվ 47 արձանագրային որոշմամբ դադարեցրել է վարչական վարույթը՝ «Տնտեսական մրցվակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման փաստեր չարձանագրելով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ բողոքաբերի պահանջի 3-րդ կետը ենթակա է մերժման:

Բողոքաբերի 2-րդ պահանջը վերաբերվում է Պատվիրատուի գնումների ընթացակարգի ապօրինի լինելուն: Մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածը՝ Պատվիրատուն նշել է, որ հանրային կազմակերպությունների կողմից ՀՀ տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով: Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանել է լրացուցիչ պահանջներ, որոնց կատարման նկատմամբ վերջինս իր սահմանած կարգով իրականացնում է նաև դիտարկումներ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 26.03.2014թ. թիվ 61Ա որոշման 2-րդ կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունները գնումները կազմակերպում և իրականացնում են՝ համաձայն իրենց կողմից հաստատված գնումների կարգերի՝ ինքնուրույն, առանց կողմնակի կազմակերպությունների ներգրավման: Հանրային կազմակերպությունները նաև պարտավոր են իրենց կողմից հաստատված գնումների կարգերը և բոլոր փոփոխությունները ներկայացնել հանձնաժողովին: Վերոնշյալ հոդվածները վերլուծելով պարզ է, որ հանրային կազմակերպությունները իրենց կողմից կազմակերպված գնման ընթացակարգը կազմակերպում են ինքնուրույն, իրենց կարգերի հիման վրա՝ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վերահսկողության ներքո, ուստի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներքին կանոնակարգը և դրանով կազմակերպվող գնումների գործընթացները պարբերաբար մոնիթորինգի են ենթարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից, միաժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա վերահսկվում են նաև վերջինիս կողմից, հետևաբար նշված ընթացակարգի ապօրինի ճանաչվելու դեպքում, կասկածի տակ կդրվի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից մոնիթորինգի արդյունքում՝ առանց խախտման կատարված գնումները, գնումների ընթացքում ձևավորված ծախսերի հիմնավորվածությունը և հանրությանը մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հաշվարկված կարգավորվող սակագների իսկությունը, որոնց գնագոյացման հաշվարկների մեջ ներառվում են նաև վերոնշյալ ծախսերը: Պատվիրատուն գտնում է, որ նշված պահանջը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց կամ հիմնավոր փաստ՝ նշված ընթացակարգի ապօրինի լինելու մասին:

Անդրադառնալով բողոքաբերի 1-ին պահանջին, Պատվիրատուն հայտել է, որ վերջինս իր պահանջների հիմքը կառուցում է միմիայն «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից բաց ARM-T 021/15 մրցույթի «Բաց տենդերի մասնակցի հրահանգի» մատակարարին և տրամադրվող ծառայություններին ներկայացվող պահանջների համար հստակ սահմանված 100 որակավորված պահնորդների առկայության վերաբերյալ պահանջի անհիմն և ձևական պահանջ լինելու հիմքի վրա: Վերոնշյալի հետ կապված Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից նշված 100 որակավորված պահնորդների առկայությունը պայմանավորված և հիմնավորված է հետևյալով. «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ թիկնապահական և պահնորդական

գործունեությունը՝ լիցեզավորման ենթակա գործունեություն է, որն իրականացվում է պայմանագրային (վճարովի) հիմունքներով, ոչ պետական կազմակերպության կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով: Թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականցնող կազմակերպություն է համարվում՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա ստացած ոչ պետական կազմակերպությունը: Նույն օրենքի համաձայն՝ պահնորդ է համարվում պահպանվող օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի՝ շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար նույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ: Նույն օրենքի համաձայն, թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ բարդ ընթացակարգով: ՀՀ կառավարության 30.08.2012թ. թիվ 1152-Ն որոշման համաձայն՝ պահնորդական ծառայություններ մատուցող կազմակերպության մոտ աշխատողների առկայությունը, և վերջիններիս մասին տեղեկատվության ներկայացումը լիազոր մարմին մասնավոր պահնորդական լիցենզիա ստանալու համար հանդիսանում է լիցեզիա ստանալու պայմաններից մեկը: Այսինքն, այն իրավաբանական անձը, որը ցանկություն է հայտնում ստանալ մասնավոր պահնորդական ծառայություններ մատուցելու լիցենզիա, պետք է ունենա գրանցված և աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող որակավորված պահնորդներ, նոր դիմի լիցենզիա ստանալու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն գտնում է, որ իր կողմից մարդկային ռեսուրսների առկայության մասին որակավորման պահանջը հիմնավոր է և ամբողջությամբ համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին: Ավելին, մարդկային ռեսուրսների առկայության պահանջը վերաբերել է բաց մրցույթին մասնակցելու որակավորման չափանիշին, այլ ոչ թե պայմանագրի կնքման պահի դրությամբ աշխատակազմ հավաքագրելուն: Պատվիրատուն նշվածը հիմնավորվում է հետևյալով. բաց ARM-T 021/15 մրցույթի «Բաց տենդերի մասնակցի հրահանգի» 2.1.1 կետով սահմանված են մասնակցի առաջարկի կազմին ներկայացվող պահանջները և մասնակցի կողմից պարտադիր լրացման ենթակա հրահանգին կից ներկայացված հավելվածները,

մասնավորապես, Հավելված 4-ը՝ որակավորման պահանջներին մասնակցի առաջարկի համապատասխանության մասին հայտարարագիրը: Հրահանգի 2.2 կետով սահմանված է նաև, որ մասնակիցն արտացոլում է որակավորման պահանջներին իր առաջարկի համապատասխանության աստիճանը, որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարագրում /Հավելված 4/: Մատակարարին և տրամադրվող ծառայությունների ներկայացվող պահանջների 5-րդ կետում հստակ սահմանված է, որ մասնակիցը պետք է ունենա որակավորված վարչական անձնակազմ, ոչ պակաս քան 100 պրոֆեսիոնալ պահնորդների առկայություն /պահնորդի պրոֆեսիոնալ որակավորում ստացած/, որն արտացոլված է հարկային մարմիններին ներկայացված ընկերության վերջին հաշվետվության մեջ: Այսպիսով, առնվազն 100 պահնորդ ունենալու և վերջիններիս վերաբերյալ հարկային մարմիններում հաշվետվությամբ արտահայտված լինելու մասին պահանջը հստակ արտահայտում է ընկերության որակավորման չափանիշի առկայությունը՝ մասնակցության պահին, այլ ոչ թե պայմանագրի կնքման պահին, ինչպես փորձում է հիմնավորել բողոքաբերը: Բողոքաբեր ընկերության կողմից լրացված բաց մրցույթի որակավորման պահանջների համապատասխանության մասին հայտարարագրում նշվել է, որ վերջինս լիովին համապատասխանում է Պատվիրատուի կողմից սահմանված բաց մրցույթի պահանջին՝ մասնավորապես, մասնակցի կողմից որակավորված վարչական անձնակազմի առնվազն 100 աշխատակցի առկայության պահանջին: Մասնակցի կողմից որակավորման պահանջներին համապատասխանելու մասին հայտարարագրում «Լիովին համապատասխանում է» գրառում կատարելով՝ վերջինս հայտնել է իր կողմից որակավորման պահանջներին առաջարկի լրիվ համապատասխանության մասին:

Պատվիրատուն գտնում է, որ այն հանգամանքը, որ բողոքաբերը գիտակցել և քաջատեղյակ է եղել առնվազն 100 աշխատակցի պահանջի մասին, վկայում է նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի և Պատվիրատուի միջև տեղի ունեցած 20.04.2016թ. էլեկտրոնային նամակագրությունը: Մասնավորապես, վերջինս Պատվիրատուի կողմից բարձրացված հարցադրմանը հայտնում է հետևյալը, որ ներկայացնում է հարկային մարմիններին ներկայացված հաշվետվությունը, որտեղ արտացոլված են 95 անձնաց տվյալները, իսկ յոթ անձանց հետ կնքվել են օժանդակ/ռեզերվային/ համաձայնագրեր: Սակայն բողոքաբերի կողմից այդպես էլ չի ներկայացվել իր իսկ կողմից նշված հաշվետվությունը: Ավելին, Պատվիրատուի կողմից նախկինում կազմակերպված նույն առարկա բաց մրցույթի որակավորման պահանջը նույնպես առկա է եղել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կարիքների համար 2

տարի ժամկետով ֆիզիկական պահպանության և ահազանգման ավտոմատացված համակարգով պահպանության ծառայությունների մատակարարի ընտրության ARM-T 020/14 մրցույթի հրահանգում:

Պատվիրատուի կողմից մասնակցի որակավորված, պրոֆեսիոնալ պահնորդների առվազն 100 աշխատակցի առկայության պահանջը պայմանավորված է ոչ թե ձևական նկատառումներով, այլ ելնելով մրցույթի առարկայից և մասնակցի կողմից ծառայությունների պատշաճ որակ ապահովելու անհրաժեշտությունից: Որակավորված, պրոֆեսիոնալ պահնորդների առնվազն 100 աշխատակցի առկայությունը այն նվազագույն շեմն է եղել, որը ցույց կտար մասնակցի հնարավորությունները՝ ծառայությունների մատուցման ամբողջ ընթացքում:

Պատվիրատուն հայտնել է, որ մրցույթով պահանջվող ծառայությունները հաղթողի կողմից մատուցելու համար, մասնակիցը կամ հաղթողը, լավագույն պարագայում, պետք է ունենա 200 աշխատակից, որը սակայն ծառայություններ մատուցողի կողմից աշխատանքների առավել արդյունավետ կամզակերպման հարց է: Այսպիսով, աշխատակիցների քանակի հնարավոր ավելացման հարցը կարող է որոշվել պայմանագրի շրջանակներում՝ ծառայություն մատուցողի նախաձեռնությամբ և չի ենթադրում պայմանագրի գնի փոփոխություն: Պատվիրատուի կողմից մրցույթի հրավերում աշխատակիցների առավելագույն քանակի նախապայման չի դրվում, որպեսզի չսահմանափակվի հավակնորդների մասնակցության իրավունքը: Ուստի, Պատվիրատուի կարծիքով, եթե մասնակիցը չի ապահովում աշխատակիցների քանակի գոնե նվազագույն շեմը, վերջինիս կողմից որակավորված պահնորդների շուկայում հայտնաբերումը և աշխատանքային պայմանգրերի կնքումը կլինի ժամանակատար, որից կտուժի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից պահպանության հանձնված օբյեկտների և գույքի պահպանությունը և անվտանգությունը:

Պատվիրատուն նշել է, որ բողոքաբեր «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրենի կողմից դեռևս 2014թ. «Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող և պահնորդ ուսուցանող կազմակերությունների» միության կողմից նշված հանգամանքի շուրջ բողոք էր ներկայացվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից 22.07.2014թ. ուղարկված պարզաբանման համաձայն հստակ նշվել է, որ ֆիզիկական պահպանության և ահազանգման ավտոմատացված համակարգով պահպանության ծառայությունները պատշաճ կատարելը անհնարին է առանց մարդկային

ռեսուրսների, ուստի այդ հանգամանքից ելնելով, մրցութային փաստաթղթերում, ի թիվս այլ դրույթների, սահմանվել է որակավորման նշված պահանջը: Պատվիրատուի պնդմամբ նշված պահանջի բացակայությունը վտանգի տակ է դնում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի անխափան և անվտանգ շահագործումը, ավելի վտանգելով նաև ազգային և ՀՀ անվտանգությունը: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ընկերության այդ մոտեցումը օրենսդրության խախտում չի դիտարկել: Միաժամանակ Պատվիրատուն նշել է, որ նման նախապայմանի բացակայության դեպքում, հետագայում կարող են խախտվել մասնակիցների իրավունքները, քանի որ նման նախապայմանի բացակայությունը կարող է դիտարկվել գնման գործընթացին մասնակցության արհեստական պարզեցում, հաշվի առնելով, որ միևնույն է հաղթող ճանաչելու ժամանակ Պատվիրատուն կառաջնորդվի իր կարիքների համար անհրաժեշտ նվազագույն աշխատակիցների քանակը ապահովող մասնակցի նախապատվություն տալու իրավաչափ իրավունքով, քանի որ հակառակ դեպքում կկրի վնասներ:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հայտնել է, որ բողոքաբերի ոչ մի պահանջ հիմնավորված չէ, և որ բողոքաբերը տեղյակ է եղել նվազագույն աշխատակից ունենալու Պատվիրատուի պահանջին դեռևս 2014 թվականից, ուստի վերջինիս կողմից նման պահանջ կրկին առաջադրելը, այն էլ ոչ թե անմիջապես մրցույթի հրավեր ստանալուց, այլ բողոքաբեր ընկերությանը որակազրկելուց հետո, Պատվիրատուի կողմից դիտարկվում է որպես վերջինիս տնտեսական գործունեությանը չարամիտ միջամտություն և խոչընդոտելու փորձ՝ բողոքարկման իրավունքը չարաշահելու դրսևորմամբ: Ինչ վերաբերում է «ԱրմենՏել» ՓԲԸ-ին, ապա վերջինիս կողմից հայտարարված բաց ARM-T 021/15 մրցույթը ամբողջությամբ համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին և ՀՀ ՀԾԿՀ 26.03.2014թ. թիվ 61Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դրույթներին, ուստի համարժեք են այն կարիքներին, որոնց բավարարման նպատակով հայտարարվել է նշված մրցույթը, ինչպես նաև ներառում է աշխատանքների ծավալների, և այլ պայմանների ամբողջական նկարագրությունը: Ամփոփելով, Պատվիրատուն հայտնել է, որ մրցույթ հայտարարելով, հիմնվել է միասնական կանոնների թափանցիկության, մասնակիցների շրջանակի ընդլայնման, բոլոր մասնակիցների հավասարության և գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքների վրա:

3. ԳԲԽ-06/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.08.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 29.07.2016թ. բողոքը բավարարել մասնակի՝ չեղյալ հայտարարել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և ՀՀՈՊՊԳՎ-ի միջև 23.06.2016թ. կնքված պայմանագիրը, իսկ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գնումների գործընթացը ապօրինի ճանաչելու և ՀՀՈՊՊԳՎ-ին պահնորդական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջները մերժել:

4. ԳԲԽ-79/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-79/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԱրմենՏել» ՓԲԸ-ն՝ 2 տարի ժամկետով ֆիզիկական անվտանգության և ավտոմատիզացված ազդանշանային համակարգերի միջոցով անվտանգության ծառայության մատակարարի ընտրության նպատակով 30.10.2015թ. հայտարարել է ARM-T 021/15 բաց ընթացակարգ:

2. Ընթացակարգի լոտ 2-ին (ֆիզիկական պահպանություն) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.02.2016թ. կայացված որոշմամբ՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել է www.gnumner.am կայքում:

4. Պատվիրատուն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ից պահանջել է, որպեսզի վերջինս մինչև 19.04.2016թ. ներկայացնի հայտը ներկայացնելու պահի՝ 30.11.2015թ-ի դրությամբ, գրանցված 100 որակավորված պահնորդի վերաբերյալ հարկային հաշվետվություն:

5. Ընկերության կողմից համապատասխան հաշվետվությունը չներկայացնելու արդյունքում, պատվիրատուի գնահատող հանձնաժողովը «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին 04.05.2016թ. կայացված որոշմամբ որակազրկել է:

6. Պատվիրատուն 23.06.2016թ. պայմանագիր է կնքել երկրորդ տեղը զբաղեցրած ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության հետ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքին՝ 16.07.2016թ. ներկայացված գրությունը, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 09.08.2016թ. թիվ ԻՏ/1268 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով իր կողմից սահմանված ընթացակարգով, ARM-T 021/15 ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) արդյունքում 25.02.2016թ. կայացրել է որոշում, համաձայն որի՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով՝ ֆիզիկական պահպանություն պահնորդների միջոցով, հաղթող է ճանաչվել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն): Պատվիրատուի կողմից Ընկերությանը հաղթող ճանաչելու մասին որոշումը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակվել է www.gnumner.am էլեկտրոնային կայքում:

Պատվիրատուն, Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով Ընկերությանը հաղթող ճանաչելուց հետո, սկսել է վերջինիս հետ պայմանագրի կնքման գործընթացը: Սակայն, Պատվիրատուին 07.04.2016թ. հայտնի է դարձել, որ Ընկերությունն ի սկզբանե ներկայացրել է ոչ հավաստի տվյալներ, մասնավորապես՝ վերջինիս կողմից բաց ընթացակարգի մասնակցության պահանջը՝ կապված առնվազն 100 համապատասխան աշխատակիցներ ունենալու մասով չի համապատասխանել իրական պատկերին: Նշված հարցի կապակցությամբ Պատվիրատուն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին 07.04.2016թ. էլեկտրոնային եղանակով հարցում է ուղղել, նաև նշելով, որ մինչև 19.04.2016թ. վերջինիս կողմից ՀՀ հարկային մարմիններին ուղղված համապատասխան հաշվետվություն չներկայացնելու դեպքում՝ Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում կիրառել 2 տարի

ժամկտով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համար ֆիզիկական պահպանության և ավտոմատացված ազդանշանային համակարգի միջոցով պահպանության ծառայությունների մատակարարի ընտրության բաց տենդերի մասնակցի հրահանգի (այսուհետ նաև՝ Հրահանգ) 4.1 կետում սահմանված մասնակցի որակազրկման հիմքերը:

Նշված ժամկետում սակայն, Ընկերության կողմից համապատասխան փաստերը հաստատող որևէ փաստաթուղթ կամ հաշվետվություն Պատվիրատուին չի ներկայացվել, ինչի արդյունքում Պատվիրատուն, ի դեմս գնահատող հանձնաժողովի՝ կայացրել է որոշում «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին որակազրկելու մասին և միևնույն ժամանակ, սկսել է պահեստային մատակարար ճանաչված ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության (այսուհետ նաև՝ ՀՀՈՊՊԳՎ) հետ պայմանագրային հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ առանց ***պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակելու***:

Հրահանգի՝

1. 1-ին կետի համաձայն՝ տենդերի անցկացման արդյունքում պատվիրատուն ամեն լոտով ընտրում է մեկ հաղթող և մեկ պահուստային մատակարար:

2. 2.4 կետի համաձայն՝ պահուստային մատակարար ընտրվում է այն մասնակիցը, որի վերջնական առաջարկին կշնորհվի Դաս 2, և պահուստային մատակարարը կարող է ներգրավել հաղթողի որակազրկման դեպքում:

Նույն կետի համաձայն՝ տենդերի հաղթողի մասին տեղեկատվությունը կհրապարակվի www.beeline.am և www.gnumner.am ինտերնետային կայքերում:

Խորհուրդն գտնում է, որ տվյալ պարագայում Պատվիրատուն որակավորումը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով ընտրված մասնակցին՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից, որից հետո ***հաղթող*** է ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ պահուստային մատակարար ՀՀՈՊՊԳՎ-ին: Ինչպես սահմանված է Պատվիրատուի Հրահանգի 2.4 կետով՝ տենդերի հաղթողի մասին տեղեկատվությունը պետք է հրապարակվի www.beeline.am և www.gnumner.am ինտերնետային կայքերում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի համաձայն՝ բաց ընթացակարգի ձևով գնում կատարելու դեպքում, մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

2. 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվությունն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը, եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց նույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների կատարման կարգերը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները հրապարակվում են նաև տեղեկագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների բողոքարկումն իրականացվում է նույն օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ եթե Պատվիրատուի ներքին կանոնակարգերով նախատեսված չեն այլ դրույթներ, ապա վերջինս իր կարիքների համար գնումներ իրականացնելիս պետք է առաջնորդվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով, այսինքն, Պատվիրատուն պարտավոր էր 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշումը ևս հրապարակել www.gnumner.am կայքում: Չկատարելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն ամրագրված պարտավորությունը՝ Պատվիրատուն զրկել է «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից:

Խորհուրդը գտնում է, որ բողոքը այս հիմնավորմամբ ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված՝ պատվիրատուի գնումների ընթացակարգը ապօրինի հայտարարելու պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ Ընկերության այս պահանջը ենթակա է մերժման, քանի որ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ աօպրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհուրդը բավարարել է Ընկերության կողմից ներկայացված 1-ին՝ պատվիրատուի և ՀՀՈՊՊԳՎ-ի միջև 23.06.2016թ-ին կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու պահանջը, ուստի Ընկերության 2-րդ պահանջը դառնում է անհիմն, քանզի կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու պարագայում գնման ընթացակարգը չի կարող ճանաչվել ապօրինի:

Ինչ վերաբերվում է ՀՀՈՊՊԳՎ-ին պահնորդական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջին, ապա Խորհուրդը հայտնում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Ուստի, ՀՀՈՊՊԳՎ-ին պահնորդական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով անհրաժեշտ է դիմել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

- Չեղյալ հայտարարել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և ՀՀՈՊՊԳՎ-ի միջև 23.06.2016թ. կնքված պայմանագիրը:
- Պատվիրատուի գնումների գործընթացը ապօրինի ճանաչելու պահանջը մերժել:
- ՀՀՈՊՊԳՎ-ին պահնորդական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Կարապետյան Հայկ**

Անդամ՝ **Նալբանդյան Մարտիկ**